

14049



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«17» 12 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 283 - 24

Նախաձեռնող՝

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ»ՍՊԸ

Վայոց ձորի մարզ, Վայք բնակավայր, Երկրաբանների փ. 7,

Գործունեությունը՝

Սիսիան համայնքի Ույծ բնակավայրի  
կրթահամալիրի կառուցում

Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 283 - 24

« 17 » փետրվարի 2024թ.

Սիսիան համայնքի Ույծ բնակավայրում նախատեսվող  
կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք Ույծ բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 1 հողամաս

**Ներածական մաս.** «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊ ընկերությունը նախատեսում է Սիսիան համայնքի Ույծ բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 1 հողամաս հասցեում իրականացնել 144 տեղ հզորությամբ տիպային կրթահամալիրի կառուցում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ № 27112018-09-0011 /ծածկագիրը՝ 09-105-0043-0013/, Սիսիանի համայնքապետարանի կողմից 18.01.2024թ. տրված №3 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Ույծ բնակավայրում՝ «Մինչև 2026 թ.-ը կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող կրթահամալիրը կառուցվելու է գոյություն ունեցող դպրոցի ազատ հողատարածքի վրա, վերջինս շահագործման հանձնելուց հետո միայն քանդվելու է հին դպրոցի մասնաշենքը: Նախատեսվող կրթահամալիրի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված երկհարկանի շինություններ՝ բաղկացած հիմնական դպրոցի մասնաանաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունի դահլիճի մասնաանաշենքից և մեկ հարկանի մանկապարտեզից: Դպրոցի մանկապարտեզի և



մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար, իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա:

Կրթահամալիրի առաջին հարկում նախագծված են դասասենյակներ, աշխատասենյակներ և բուֆետ: Իսկ երկրորդ հարկում՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի աշխատասենյակ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի աշխատասենյակ և ուսուցչանոցը: Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ՝ 21.6x20.4 մ չափերով, որը օգտագործվելու է որպես թաքստոց: Նկուղային հարկում նախատեսվում է գրադարան, խոհանոցը, բուժկետը, պահոցները, սանհանգույցները, էլեկտրական վահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան: Թաքստոց տանող աստիճանը հագեցված է աստիճանային ամբարձիչով հաշմանդամների համար: Բոլոր հարկերը իրար հետ կապված են աստիճանների միջոցով, իսկ հարկերը կապող միջհարկային տարածությունում նախատեսվում է ամբարձիչ՝ հաշմանդամների համար: Կրթահամալիրի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսուլային ծավալը արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը: Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար: Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից՝ երկու խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ: Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը նախատեսվում է 24 ամիս:

Կրթահամալիրի շենքի արտաքին լուծումներով նախատեսվում է ճակատի խարիսխային մասը երեսապատել բազալտե սալերով, ճակատները երեսապատել ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8 մմ հաստությամբ սալերով, գործարանային ներկածածկույթով: Գլխավոր հատակագծում դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է, նախագծված է 4.0 x 8.0մ ջերմոց, 26x14մ բաց ցանկապատված մարզադաշտ, 100մ երկարություն ունեցող վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք: Կրթահամալիրի հողամասը ամբողջ պարագծով ցանկապատվելու է:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին.մոնտաժային աշխատանքների վերաբերյալ: Շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Կրթահամալիրի կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Հողամասի մակերեսը՝ 18075,70քմ, որից՝
- 4150 քմ- 23.0%-ը նախատեսվում է կառուցապատել /դպրոցի մասնաշենք պարիսպ, կաթսայատուն և այլն/



- 8220 քմ - 45.5%-ը կանաչապատել
- 1220 քմ - 7.0%-ը չի նախատեսվում մշակել, քանի որ հողամասում նախատեսվում է տեղադրել արևային ֆոտովոլտային կայան, որը պետք է պարասպապատված լինի, անվտանգությունն ապահովելու համար և տարածքը ենթակա չէ շահագործման:
- 3247 քմ - 18.0%-ը նախատեսվում է բարեկարգել, որպես ճանապարհներ և սալվածքներ, վերջիններիս մակերևույթները նախատեսվում է իրականացնել ասֆալտբետոնից, բազալտե, տուֆե և բետոնե սալերից:
- 408.35 քմ - 2.2%-ը նախատեսվում է իրականացնել միաձույլ ռետինե մակերևույթից, խաղահրապարակների կամ կից տարածքների բարեկարգման համար սպորտային միջոցառումների ժամանակ վնասվածքներից խուսափելու համար:
- 800 քմ - 4.3%-ը նախատեսվում է փակել արհեստական խոտածածկույթով:

Կրթահամալիրն ապահովված է լինելու ջեռուցման էլեկտրական համակարգով, մեխանիկական դրդմամբ օդափոխության ներածման և արտածման համակարգերով, ինչպես նաև տաք և սառը ջրով:

Նախագծվող փոքրաքանակ թվով երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից, որոնց կից տեղադրվում է պոմպային համակարգ՝ բաղկացած 4 պոմպերից, որոնցից 2-ը նախատեսված են ջրամատակարարման, իսկ 2-ը հրդեհաշիջման համար:

Կրթահամալիրի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել 400կՎա հզորությամբ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանից՝ 2 մալուխային գծերով, իսկ անվտանգության ապահովման համար նախատեսվում է իրականացնել հողանցում՝ 4 Օհմ դիմադրությամբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների համապատասխան:

**Նախատեսված է շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,



- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունները,
- խստով պահպանել շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացում,
- ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- շինտեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում՝ ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. ՀՀ դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 600 հազ. ՀՀ դրամ:

**Պարճառարական մաս.** Գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ույծ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, Սյունիքի մարզպետի աշխատակազմից, Սիսիանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կլրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:





## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Ույծ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աննա Սարգսյան